

ԳՐԲԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

The Cilician Kingdom of Armenia. (Ed. by T. S. R. Boase.—Scottish Academic Press; Edinburgh and London, 1978. 20) 6p., ill., map.

ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ (ԽՄԲ. Տ. Ս. ԲՈՌՍ), Շոտլանդական ակադեմիայի հրատարակություն. էդինբուրգ և Լոնդոն, 1978:—206 էջ, լուս., բարտեղներ:

Հայ ժողովրդին վիճակված պատմական նահապետական ընդունելու նրա արվեստի բազմաթիվ մատուցներ (ձեռագրեր, կիրառական արվեստի զանազան իբեր) հանգրվանել են աշխարհի տարբեր բանագրաններում և անհատական հավաքածուներում: Անապահով վիճակում են և որոշ դեպքերում կործանման վտանգի առաջ են կանգնած հարուստ պատմական այն հուշարձաններ, որոնք գտնվում են Սովետական Հայաստանի սահմաններից դուրս: *Խոսքը վերաբերում է Տատկապետ ներկայիս Քուրմիսի տարածման գտնվող հայկական կոթողներին և շինություններին:*

Բազմաթիվ հարուստ պատմական հուշարձաններ են մնացել պատմական Կիլիկիայի հողում: Բուրժուականների սառչադաշտման և Բյուզանդիայի նեղ բաղադրանքային հետևանքով հայերը ստիպված եղան աստիճանաբար գանգաձայնորեն արտագաղթել իրենց հայրենիքից և հանգրվանել Փոքր Ասիայի հարավային մասում՝ Կիլիկիայի տարածման: Այս շրջանը հայ ժողովրդի պատմության կարևոր շրջաններից մեկն է, երբ բաղադրական և մշակութային կյանքը կենտրոնացավ Միջերկրականի ափերին: Պատմությունից մեզ հայտնի է, որ այստեղ 11-րդ դարի երկրորդ կեսից, կիլիկյան առանձին իշխաններ աստիճանաբար ուժեղացման և ի վերջո կարողացան ստեղծել հայկական նոր պետություն: 1198 թվականին այն հռչակվեց թագավորություն, իսկ 1375 թվականի վերջին Լևոն Զ թագավորը գերի տարվեց Եգիպտոս, ապա ազատվեց, անցավ Եվրոպա և իր մահկանացուն կենց Զրանսիայում, որտեղ և թաղված է: Սահմանային պատերազմների և ներքին զժողությունների այդ փոթորկուտ շրջանում, պատմական բարդ պայմաններում կիլիկյան մշակույթը հասավ անհարթ ծաղկման: Առաջացավ գրողների և արվեստագետների մի փայլուն համաստեղություն, որոնց երկերը կարևոր ներդրում են ունենում հայ, այլև համաշխարհային արվեստի զանազանում:

Գրականության և արվեստի հետ մեկտեղ

և՛ է՛վերելի ապրեց և հարուստ պետություն: Կիլիկյան Հայաստանի շինարարները է՛վ ներառված բնագավառներից է: Այս հարուստ պատմական ժառանգության մասին կարևոր ուսումնասիրություններ են գրել Ղ. Ալիշանը, Կ. Մովսեսյանը, Ն. Սևակյանը, Ս. Տերտերսյանը և ուրիշներ: Այդ հեղինակների երկերի շարքն է լրացնում 1978 թ. էդինբուրգում Գարսոտ կյուպենկյան հաստատության նյութական օժանդակությամբ հրատարակված «Կիլիկյան Հայաստանի թագավորությունը» ժողովածուն, որի խմբագիրն է անգլիական և իսրայելացի արվեստի նշանավոր պատմաբան, Լոնդոնի Քուրսո ինստիտուտի տնօրեն Տ. Ս. Բորսը:

Մի քանի հոդվածներից բաղկացած այս հատորը գիտական նոր և կարևոր ավանդ է միջնադարյան կիլիկիայի պատմության և մշակույթի ուսումնասիրման բնագավառում: Գրքում տրված է հայկական այդ թագավորության համառոտ պատմությունը և ներկայացված են որոշ է՛վ հայտնի բերդեր և ամրոցներ:

Առաջին գլխի՝ «Թագավորության պատմություն» հեղինակն է Տ. Ս. Բորսը: Այստեղ նա կարողացել է հակիրճ ձևով շարադրել կիլիկյան պետության բարդ ու կենդանու տարեգրությունը: Տ. Ս. Բորսը լուսաբանում է հայերի հակասական հարաբերությունները բյուզանդացիների, քուրմերի, արաբների, իսլամիկների հետ: Ներկայացնում է կիլիկյան դեկլարանների նկուն բաղադրականությունները, կենտրոնաձիգ և կենտրոնախույս իշխանական տների հետ նրանց ունեցած փոխհարաբերությունները: Խմբագիրը չի մոռանում նշել կիլիկիայում ապրած և ստեղծագործած հայ մշակույթի երախտավորներից գրիչ և ծաղկող Քուրսո Թուսիկի ու նրա հետևորդների գործունեությունը: (Ի դեպ առանձին պատկերով ցուցադրված է 1272 թ. կենտրոնախույս ավետարանից «Թովմասի անձավատությունը» թեմատիկ մանրանկարը):

Գրքի երկրորդ բաժնում տրված է կիլիկիայի բերդերից Պարոսի (ըստ իսլամիկների՝

Գաստն) ուսումնասիրությունը, հեղինակ՝ Ս. Վ. Լոուրենս: Հուլյան ամսուայի հատկագծերը պաշտօնական են Կալիֆորնիայի համալսարանի ճարտարագիտական ֆակուլտետի շրջանակներում: Տ. Չ. Բրունի: Այնպիսի տեղեկանքներ չունեն իրենց ավանդը ունեն Ե. Ալբրեյտսըն ու Ք. Ալբրեյտսը: Ա. Վ. Լոուրենսը սկսել է բերդի տազոտությունը դեռևս 19: Տ. 1939-ից Մետո, երբ Պաղրասը անցավ Թուրքիայի կազմի մեջ, այն զգալի չափով ավերվել է: Այս ամբողջը, ըստ Ա. Վ. Լոուրենսի, ունեւ շատ կարեւոր սարատեղիական նշանակություն (մասնավորապէս գտնվում Անտիոխի, Ալեքսանդրիոսի, Հայկապոնի) և թերևս դա է պատճառը, որ 1191 թվականին հայոց կան Ք. Բագրատը գրավում է այն: Պաղրասի հիմնադրման պատմությունը վերաբերում է նախակիրիկյան շրջանին, բայց լեռնային պահպանված կառուցումների հետ զույն շեշտը, ըստ Լոուրենսի, համապատասխանում է հայկական տիրապետության ժամանակահատվածին: 1191—1211 թ.: Ա. Վ. Լոուրենսը շինարարական երկրորդ շերտը համարում է ամառականների գործը, երբ բերդը գտնվում էր նաև տնօրինության ներքին (կրկին նորոգւմ անհրաժեշտությունը կարող էր առաջանալ 1236 թվականին արաբների կողմից այդ ուստանի անհաջող պաշարման հետևանքով): Վերջին վերակառուցումները այստեղ կատարված են արաբների ձեռքով (տաճարականների 1283 թ. ամբողջ կրակի մատնելուց հետո): Հեղինակը մանրամասն կերպով տալիս է նախ համալիրի տեղագրությունն ու պատմությունը, ապա ճարտարագիտական ամբողջական նկարագրությունը և խոր վերլուծությունը: Առանձին ենթաբաժիններով նկարագրում է արտաին պաշտպանական շինությունները, հետո անցնում ներքին կառույցներին: Չափազանց կարևոր են յուսակարները (նկարված՝ 1938 և 1951 թթ.), որոնք հրատարակվում են առաջին անգամ: Լոուրենսը հատուկ նշում է, թէ Պաղրասի որ մասերն են ավերված եղել 15: Տ-ին և 1951-ին (իր վերջին այցելության ժամանակ):

Իրի երրորդ «Ազգիքի բերդը» գլխի հեղինակներն են Ջ. Գանդլեր ու Վ. Բուլլը: Ազգիքի մասին հայ կամ օտար պատմագրության մեջ ոչ մի հղում չկա: Անգլիացի գիտնականները ուղարկություն են դարձնում նրա տեղագրությանը, նկատում, որ այն գտնվում է Կիրիլիայի արևելյան սահմանի՝ պաշտպանական գծի վրա: Այստեղ տեսնելի է հայկական ամրոցների, դղյակների մի ամբողջ շրջան: Կուկիտե, Վանկա, Ջեյրուն, Շողական, Կապան, Մարաշ, Սիս, Հոսովկա, Բողոտ, Ամուղ, Քիլ Համզուն, Սարվանդիբար, Օնարեղ և այլն:

Ուսումնասիրողները նշում են, որ այդ տարածքը Ռուբինյանների նստավայրն է եղել և 1375 թ. կան Ջ-ի վերջին հանգրվանը կիրիկյան պետականության կործանումից անմիջապէս առաջ: Ավերակները ցույց են տալիս, որ

բերդում կան ավելի ուշ շրջանի կառույցներ, բայց ընդհանուր առմամբ համալիրի տարբեր մասերը շինված են նույն ժամանակ: Առանձին կերպով նկարագրելով տուված է Ազգիքի զանազան մասերի նկարագրությունը: Առձանագրությունների և ճարտարապետական որոշակիացնող առանձնահատկությունների բացակայության պատճառով դժվար է պարզել, թե հայոց պատմության հատկապես որ ժամանակահատվածին է բերդը վերաբերում:

Հայտնի երկու բաժինները զուտ պատմական բնույթ ունեն: Ջ. Ս. Ք. Բայլի-Սմիթը հեղինակ է «Տաճարականներն ու Տեսնական ասպետները կիրիկյան Հայաստանում», իսկ Ա. Ք. Լարբերը՝ «Հյուրընկալների ներխուժումը Կիրիկյան Հայաստան 1291—1375 թթ.» գլուխներին: Խաչակիր ասպետների հոգևոր օրդեններից՝ Տաճարականները և Հյուրընկալները հաստատել էին իրենց կենտրոնները կիրիկիայում և մերձակա տարածքում (Կիպրոսում, Անտիոնում, Տրիպոլիում և այլուր): Որպես բրիտանացիներ, հայ թագավորները հանախ կին դաշնակցում նրանց հետ պայմանելու համար բերդահանուր պշնամու՝ իսլամական սպառնալիքի դեմ: Իրա հետ մեկտեղ հայտնի են թագավորիվ դեպքեր, երբ այդ ասպետների օրդենները զենքի ուժով գրավել են Կիրիկիայի բերդերի շատերը և նույնիսկ աշխատել են տապալել հայկական կենտրոնական իշխանությունը տեղում: Այսպիսին էր Միջերկրականի փերին ստեղծված հայկական պետության իրականությունը մինչև 1375 թ. մամլուֆների կողմից նրա վերջնական կործանումը:

Այս գրքի եզրափակող բաժնի՝ աշխարհագրական տեղեկատուի մեջ հեղինակը՝ Տ. Ս. Ք. Բուլլը ներկայացնում է կիրիկյան տեղանունները տարբեր աղբյուրներից բաղկած ձևերով, մերթ քնդ մերթ տալով անգամ դրանց վերաբերող պատմական տվյալներ: Շատ պետանուններ մեջբերված են արաբական աղբյուրներից, և այս հարցում իր մասնագիտական խորհուրդներով Թոուսին աշակցել է Ք. Ք. Սաչբերը: Այստեղ որպես հավելված կցված է կիրիկյան Հայաստանի իշխանների և թագավորների անվանացանկը:

Աշխատությունը ավարտվում է մատենագիտական և հատուկ աճուրդների ցանկերով: Օգտագործված բազմալիզու հարուստ գրականություն մեջ հանդիպում են ժամանակագրություններ, արտեղներ, վավերագրական փաստաթղթեր, նամակառիտորական նոթեր, երբեմն էլի հայտնի պատմական այլ աշխատություններ, որոնք բացառիկ արժեք են հաղորդում ինքու առարկա գրքին:

Այս ժողովածուի մեջ գետնոված են կիրիկյան Հայաստանի բերդերի հազվագյուտ լուսանկարներ, որոնք ուղեկցվում են Ա. Վ. Լոուրենսի համատուտ տեղեկություններով: Այստեղ ներկայացված են Սելևկիայի, Սիսի, Վանկայի, Լամբրոնի, Կիրիկիայի, Պաղրասի, Ազ-

գրքի, Սարվանդիֆարի, Կոռնիսի, Անամուտի, Իզդոսի, Թիլ Համբունի և Օմարեղի տեսարանները:

Իրախոսվող գրքի հեղինակները իրենց աշխատանքի ընթացքում բազմաթիվ խոչընդոտներ են հաղթահարել: Գեոևս հայտնի չեն հայկական բազմաթիվ նշանավոր պատմական վայրերի, մասնավորապես, բերդերի նշգրիտ տեղերը: Իսրելի ընթացքում տեղանունները մեծ փոփոխություններ են կրել, որ դժվարացնում է ուսումնասիրողի որոնումները: Անգլիացի գիտնականների աշխատության կարևորությունը բոտ ամենայնի գնահատելիս անհրաժեշտ է հիշել, որ տեղագրական հարցերը խիստ կարոտ են հետազոտման: Տեղանունների որոշման տեսակետից մասնագետներին օգնել են հայերեն, ասորերեն, հունարեն, լատիներեն, արաբերեն, լուսեբերեն ու ռուսերեն աղբյուրները:

Խնդրո առարկա գրքից անմիջապես առաջ Իոննուսը լույս է ընծայվել Հ. Հեյլենկեմպերի գիրքը կիլիկյան բերդերի մասին, իսկ վերջերս՝ Մ. Ճևանիրեյանի և Ռ. Վ. Էդվարդսի հոդվածները, որոնցով գիտական շրջանառության մեջ են մտնում նոր նյութեր, վարկածներ և զգալիորեն լրացվում է կիլիկյան շինարվեստի պատկերը: Ռ. Վ. Էդվարդսի հոդվածներով մեջ հատկապես առանձնանում է Պաղրասի նվիրված ուսումնասիրությունը: Հեղինակը բնեկ է բյուզանդական և կիլիկյան հայկական ամրոցների պատերի շարվածքի արտաքին և ներքին առանձնահատկությունները և կազմել համապատասխան այդ հատկաձևերի համեմատական համակարգ, որը նրան հնարավորություն է տալիս մերժել կամ հաստատել Պաղրասի վերաբերյալ Ա. Վ. Լուրենսի դիտողությունները: Ռ. Վ. Էդվարդսը իր փաստարկումների համար օգտագործել է նաև այն տվյալները, որոնք ստացել է տարբեր բերդերի շարվածքների շաղախի ֆիսիկական վերլուծությունից: Նա մանրամասն ուսումնասիրել է Պաղրասի կառուցվածքը, վեր հանել Տանարականների և կիլիկյան, նաև կենտրոնական Հայաստանի,

նույնիսկ ուրարտական բերդաշինության հետ այս հուշարձանի ունեցած աղերսները: Ռ. Վ. Էդվարդսը եզրակացնում է, որ կիլիկյան հայկական քաղաքապետության համար Պաղրասը այնքան էլ կարևոր չի եղել (12—13-րդ դարերում հայերը տիրել են բերդին ոչ ավել քան 28 տարի), այլապես այն կկառուցվեր նույնքան ամուր, որքան մյուս բերդերը: Բացի այդ, եթե հայերը Պաղրասը դիտեին իրենց մշտական սեփականություն, ապա կշինեին նրանից ոչ հեռու այլ ամրոցներ ևս, քանի որ կիլիկյան բոլոր բերդերը փոխադարձաբար տեսանելի են, անակնկալ հարձակման ժամանակ հաղորդակցություն պահպանելու համար: Ռ. Վ. Էդվարդսի կարծիքով, Լևոն Բ-ն գրավել է Պաղրասը ոչ թե իր քաղաքապետության ապահովությունը ավելացնելու նպատակով, այլ Անտիոքի ներքին գործերին խառնվելու ցանկությունից դրդված: Լևոն Բ-ն Պաղրասը լքել է, երբ հասկացել է, որ իր ուժերը շատ են ցրվում, իսկ հյուսիսային սահմանը խոցելի է:

Իրախոսվող գրքի հեղինակները բարձր են գնահատում իրենց ուսումնասիրության առարկան, նրանք նշում են, որ կիլիկյանում մնացած ամրոցներն ու բերդերը աչքի բնկնող նորադարձական հուշարձաններ են և նշանակալից տեղ են գրավում ամրաշինության պատմության մեջ: Միջերկրականի ավերին հաստատված հայկական քաղաքապետության պատմությունը շարադրելիս, ուսումնասիրողները ցույց են տալիս, թե ինչպես է վերջինիս նախադասը կապված եղել նրա ռազմատենչ հարևանների գործունեության հետ: Անգլիացի գիտնականները լուսաբանում են կիլիկիայի պատմությունը, գլխավորապես եվրոպական աղբյուրներից օգտվելով, և չի կարելի չնկատել, որ առանձին դեպքերում նրանց համակրանքը խաշակրաց կողմն է դառնում: Այդուհանդերձ, գրքի հեղինակները չեն կարող անտեսել այն փաստը, որ եվրոպական միապետները կիլիկիայի հետ սեփական հարաբերությունները կառուցելիս ավելի շատ շահագրգռված էին իրենց զավթողական, նվաճողական ծրագրերով և անտրով, քան թե հայոց քաղաքապետության նախադասը:

Խնդրո առարկա գիրքը չի ընդգրկում կիլիկիայի պետության և մշակույթի պատմության բոլոր բնագավառների համայնապատկերը, բայց, նույնիսկ իր պակաս կամ վիճելի կողմերով հանդերձ, այն կարևոր է Միջերկրականի ավերի հայկական քաղաքապետության ուսումնասիրման նախապարհին:

1 Տե՛ս R. W. Edwards, *Ecclesiastical Architecture in the Fortifications of Armenian Cilicia*.—*Dumbarton Oaks Papers*, vol. 33 (1982), p. 155—176; idem, *Ecclesiastical Architecture in the fortifications of Armenian Cilicia: Second Report*.—*Dumbarton Oaks Papers*, vol. 37 (1983), p. 123—146. idem, *On the Supposed Date of Yilan Kalesi*.—*Journal of the Society for Armenian Studies*, vol. 1 (1984), p. 23—33.

2 Տե՛ս idem, *Bagras and armenian Cilicia: A Reassessment*.—*Revue des Etudes Arméniennes*, tome XVII (1938), p. 415—432.